# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"18" հոկտեմբերի 2012թ № 131- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 21 - ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ <<ՄԵՆՔ ՈՒԽՏ ՈՒՆԵՆՔ ՄԻՇՏ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ>> ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 08.02.05.03. <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս>> միջոցառում կազմակերպելու նպատակով 371.7 հազ. դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
2. Հաստատել << Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս >> միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը, կանոնադրությունը, անցկացման ծրագիրը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5 հավելվածների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումների և գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 18
ք. Կապան

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի18-ի
N 131- Ա որոշմամբ

# ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս >> միջոցառման կազմակերպման և անցկացման

| | | |
|---|---|---|
| 1. Ս. Խաչատրյան | - | ՀՀ Սյունիքի մարզպետ, նախագահ |
| 2. Վ. Գրիգորյան | - | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, /նախագահի տեղակալ/ |
| 3. Լ. Մարգարյան | - | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| 4. Ա. Մարդյան | - | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| 5. Ս. Դավթյան | - | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ |
| 6. Ա. Աթայան | - | Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 7. Ն. Ոսկանյան | - | Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 8. Ս. Հայրապետյան | - | Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 9. Մ. Զաքարյան | - | Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 10. Վ. Գևորգյան | - | Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 11. Ա. Հակոբջանյան | - | Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/ |
| 12. Վ. Արզումանյան | - | «Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 18-ի
N 131-Ա որոշմամբ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս >> միջոցառման կազմակերպման և անցկացման

1. Նպատակը

Մարզի բնակիչների, երիտասարդության և ուսանողության, աշակերտների հոգևոր դաստիարակություն, Հայ Առաքելական եկեղեցու դերի բարձրացում, աղանդավորության դեմ պայքարի ակտիվացում, ազգային ավանդական ծեսերի ու ծիսակատարությունների պրոպագանդում և տարածում, մշակութային կյանքի աշխուժացում, հասարակական կյանքում երիտասարդության դերի բարձրացում:

2. Միջոցառման պատվիրատուն և կատարողը.

«Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս» մարզային միջոցառման պատվիրատուն է Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Միջոցառման ղեկավարումը իրականացնում է միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված կազմկոմիտեն և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

3. Միջոցառման մասնակիցները

«Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս» մարզային միջոցառմանը մասնակցում են մարզի տարածաշրջանների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ, երիտասարդներ, աշակերտներ, հիմնարկ-ձեռնարկության աշխատակիցներ :

4. Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումը անց է կացվում ս/թ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ Կապան և Գորիս քաղաքներում, Տաթևի վանքում:

5. Միջոցառման ընթացքը և ծախսերը

«Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս» մարզային միջոցառումը կազմակերպվում է ըստ ծրագրի, հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և առանձին միջոցառումների անցկացման վայրը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ:

Միջոցառման անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտի, վառելիքի, հուշանվերների և պարգևատրման, սննդի և սպասարկող անձնակազմի/ հոգում են միջոցառման կազմակերպիչները համաձայն,հաստատված նախահաշվի:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 3
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 18 -ի
N 131-Ա որոշմամբ

# ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս >> միջոցառման կազմակերպման և անցկացման

1. Մարզի բնակչության, երիտասարդության և ուսանողության, աշակերտների շրջանում բարձրացնել հոգևոր դաստիարակությունը, Հայ Առաքելական եկեղեցու դերի բարձրացումը, ազգային ավանդական ծեսերի ու ծիսակատարությունների պրոպագանդումն ու տարածումը, մշակութային կյանքի աշխուժացումը, պատմամշակութային հուշարձանների նկատմամբ վերաբերմունքի բարձրացումը հասարակական կյանքում երիտասարդության դերի բարձրացումը:

2. Միջոցառմանը կներառվեն հետևյալ բնագավառները՝

   ազգային ավանդական ծեսեր ու ծիսակատարություններ

   Հայ Առաքելական եկեղեցու պատմություն

   հոգևոր դաստիարակություն

   Սուրբ պատարագ

3. Պսակադրում Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին:
4. Մասնակիցների հանդիպում Սյունյաց թեմի փոխառաջնորդի հետ:
5. Միջոցառման լավագույն և ակտիվ մասնակիցների պարգևատրում պատվոգրերով և հուշանվերներով:
6. Կնունքի և մատաղի արարողություն Գորիսի Սրբ. Գրիգոր Լուսավորիչ, Կապանի Սրբ. Մ.Մաշտոց եկեղեցիներում և Տաթևի վանքում:
7. Ուրախ տոնակատարություն և հյուրասիրություն ավանդական ուտեստներով, սուրբ մատաղ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 4
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 18 -ի
N 131- Ա որոշմամբ

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս >> միջոցառման կազմակերպման և անցկացման

| Հ/հ | Ծախսերի անվանումը | Հոդված ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման | Գումարը /հազ.դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տրանսպորտային միջոցների վարձակալում | 4216.21 | 85.0 |
| 2 | Հանրային սննդի ծառայության ծախսեր | 4236.21 | 200.0 |
| 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /անհրաժեշտ ապրանքների ձեռքբերում/ | 4239.11 | 26.7 |
| 4 | Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման ծախսեր | 4240.00 | 60.0 |
| | Ընդամենը | | 371.7 |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 5
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 18-ի
N 131-Ա որոշմամբ

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս >> միջոցառման կազմակերպման և անցկացման

| Հ/հ | Ժամանակը | Միջոցառման անվանումը | Վայրը |
|---|---|---|---|
| 1 | $9^{00}$-$9^{30}$ | Միջոցառման մասնակիցների հավաք | Գորիսի քաղաքապետարանի հրապարակ<br>Մարզպետարանի հրապարակ |
| 2 | $9^{30}$-$10^{00}$ | Պսակադրում Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին | Գորիս<br>Կապան |
| 3 | $10^{00}$-$11^{30}$ | Ուխտագնացություն դեպի Տաթևի վանք | Տաթևի վանք |
| 4 | $12^{00}$-$13^{00}$ | Սուրբ պատարագ | Տաթևի վանք |
| 5 | $13^{00}$-$14^{00}$ | Կնունքի արարողություն | Տաթևի վանք |
| 6 | $14^{00}$-$14^{30}$ | Հանդիպում Սյունյաց թեմի հոգևոր առաջնորդների հետ | Գորիս, Կապան |
| 7 | $14^{30}$-$15^{30}$ | Հյուրասիրություն ավանդական ուտեստներով /սուրբ մատաղ/ | Տաթևի վանք |
| 8 | $15^{30}$-$16^{30}$ | Տոնախմբություն /համերգային ելույթներ/ | Տաթևի վանք |
| 9 | $16^{30}$-$18^{00}$ | Մասնակիցների վերադարձը տարածաշրջաններ | Գորիս<br>Կապան |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան